ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

«08» 04 2024 թ. № 153-Ա

ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2024/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և 2-րդ մասի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի, 67-րդ կետի, ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2024/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի առաջին մասի 2.5-րդ կետի պահանջները և հիմք ընդունելով ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2024/1 ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2024/1 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (ՀՎՀՀ՝ 02679378, գործունեության հասցե՝ ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության՝ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը հանգեցնող խախտման (գնման ընթացակարգի հրավերի առաջին մասի 2.5-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի գնահատման համար առաջադրված աշխատակազմում ներգրավվելիք մասնագետների աշխատանքային փորձը հիմնավորող փաստաթղթերի (տեղեկանքների) իսկության ստուգման արդյունքում որոշ մասնագետների մասով դրանք հանդիսացել են իրականությանը չհամապատասխանող) և հայտի ապահովման գումարի չվճարման հիմքերով:

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝
ՌՈՒԶԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ
08 ապրիլի 2024թ.
ք. Երևան